

Ա Ւ Խ Օ Տ Վ

Ա Մ Ս Ա Գ Ի Ր

ԸՆԴՀԱՅԻ, ԲԵԼՈՐՈՒԺԻ, ԳՐԵԳՈՐԻ  
ԵՒ ՔԵՐԵՑԻ


ԻՆՆԵՐՈՐԴ Տարի



ՅԵՐԱԿՈՎԱՆԻ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՄՐԲՈՑ ՑԱԿՈՎ, ԲԵՐԱՑ

1874



# Ա Խ Ո Շ

ԽԵՆԵՐՈՒԹ ՏԱՐԻ  
Թիկ 7.

ՅՈՒՆԻ 31  
1874.

## Ա Մ Ս Ա Գ Ի Բ

Ա.Զ.Դ.Ա.Յ.Ե.Ն., Բ.Ս.Ն.Ս.Խ.Բ.Կ.Ա.Ն ԵԿ Գ.Ր.Ա.Գ.Ի.Տ.Ա.Կ.Ա.Ն

ՆԵՐԿԱՅԻՍ ՎՐԱՅ ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆՔ (\*)

Դ.

ՕՏԱՐԱՅԵԱ.Ք, թշնամունելով իւրենց բարձրէն Հայաստանեաց եկեղեցւոյ խօսք կ'ուղղէն եւ կը յորդորեն երկար ժամբորդութեան մը ելլել (1) Հունդարիա, Աւատրիա, Գերմանիա, Իտալիա, Գաղղիա, Սպա-

(1) «Պարտեցէք, ձեր գրքերն ալ ձեր հետ առանձով Եթէ կուզէք, հարիւրաւոր միջնոներուն և Եկեղեցը, ցուցուցէք ձեր ընծայութեան թշութերը, հարցուցէք գոնե անոնց նույիրապետութեան գիտաւոր տեղերը, ինչ անուն կուտան ձեւ զի. Բնչ կը համարեն զձեւ. Մտէք Հունգարիա, անցէք Աւատրիա, եկէք Գերմանիա . . .» (Գալլառձեան՝ լիբոյիշեալ գործք, երես 91).

(\*) Տես Մատութիւ 1551.

Թ.

նիա, Անգլիա և Իռլանտա . . . միմայն այն նպատակաւ թէ Բնչ կը համարին անոնք այս հին եկեղեցին, թէ Բնչ անուն կուտան իրեն. մեզի քրիչ կը բերէ այս յորդորը. Ի՞նչ պէտք մեզի երթալու այսարհ քիսկաթովիկութեան ետեւէն պարտելու. մենք չունիք մեր առջև զիրենք՝ որ կաթողիկութեն վարդապետներն են, և հայ ժողովուրդը՝ Հառմետիան Հայք, Աւղանքան Հայք, Կաբուլի Հայք անուանեալ. միթէ չենք տեսներ թէ ասոնք ալ մէջերնին բամնլւած՝ Հասունեանք և հակահասունեանք շարունակ իրարու հետ կը կռուին.

19

միթէ չե՞ք գիտեր որ իրենց իւրաքանչիւր դասք քահանայից, Քօլէճցիք, Միփթարեանք Վենետիկ, Մը լիփթարեանք Վենենայի, Լիբանանեանք եւ ուրիշներ որ մեզ անծանօթեն, ամենքն ալ Լատինական դրօշին տակ իրարու միս անուշութեամբ եւ սիրով կուտեն և սակորները կը կրծեն։ Հայաստանեայց եկեղեցին միթէ աւելի իրաւունք շունի փոխանակ Տօն Քի շօթի պէս յիմարաբար պտղուելու՝ շունի շիտակ հարցնելու ձեզի, ով վարդապետք, ինչ ըրիք իմ զաւկներս որ իզմէ յափշտակեցիք և օտարացուցիք և Նաբուգոդոնոսորայ կուռքին տարիք պաշտօն մատուցանելու, սուտ ըսկը աշխարհի և իրենց երբ ձեր հայրենի եկեղեցին օտարին երկրպագու ցըցուցիք, վասն զի այն ժամանակներն օտարը այդ յիմար փառամղութեան չէր հետեւեր . իր Ա. Հայրապետաց մէկը՝ Գրիգոր Ա. յիրաւի Ճշմարիտ վարդապետ եկեղեցւոյն Քրիստոնի և ոչ Հռոմայ, բոլոր աշխարհի կը քարոզէր և կը զուցէր թէ ոչ ոք իր նախորդներէն ընդհանուր պատրիարքի պիղծ անունը յանդգնէր էր առնուլը<sup>(1)</sup>

և թէ որչափ որ Քաղկեդոնի ժողովքն իր նախորդաց ուղեր էր այդ ախաղարտաւ, բայց ոչ ոք անոնցմէ չէր ուղած երբէք այդ ախտղսն ընդունիլ, Առւ ըսկը ձեր գրքերուն մէջ, ձեր քարոզներուն մէջ, մէջ, ձեր պատկերներուն մէջ, (1) երբ առաքելոց մէջ մեծ եւ փարբ մոցուցիք խուլ եղաք Քրիստոնի խօսքին, Զերեգիայ մօրը հեա մնափառե-

ա բութեան հանիլ (Նախականի, 58), Ո՛ւ իշեա մարգու համար, որ կուզէ ընդհանուր Եպիսկոպոսը ըլլալ, ես համարձակասուն կրօնմ մէջ կը բարբանչէ, վասն զի ընդհանուր Եպիսկոպոսի ա տիտղոսը՝ ախտղսն մ'է լի ամբուրտաւանութեամբ, բան մ' է հզարութեան, անուն մ' է սփառաւնաց, անուն մ' է կեղծաւորութեան, անուն մը և անափառութեան, անուն մը հայկոյութեան, վասն պին զի նա որ զայն կառնու, ախտղսն մը ինք, զինքնին կուռայ որ մայն Աստվածոյ որդւոյն կը պատկանի : (Գիրք Զ. Նախակ 50) : Աշեքունդորոց պատրիարքը՝ իրեն՝ Գրիգոր Անն ընդհանուր Եպիսկոպոսի անուն տալուն, այսպէս կը պատառ խանէ, «Թէ որ ևս քու ըսածդ ըլլայի, գու ալ և եպիսկոպոս չեր մեար . բնձմէ ՚ի զատ մէկը չէր ըլլար . ուրացիք այդ ըլլուն որ կրնայ մնափառ ուռեցիւնը ուռեցնել, և այն սէրը՝ զոր պարզ ա տիտղոսը մեր եպիսկոպոս եղարցի վիրաւորելու (Գիրք Է. Նախակ 50) :

(1) Պատկերը քարոզութեան միջոց մ'է : Ո՛վ որ մէր ըսածին ճշմարտութեան կուզէ վերահասու ըլլալ, թէնդ երթայ ներայի Ուկիբերան եկեղեցին Լուսաւորչաց ուեղանին պատկերը զննել :

Սեղեւստրոս Պատրիարքութեան մը վրայ, կեցած է, բարձրագուսիս եռաւպատէ թագիւ Տօմացեալ, սուր և գոռող աշքերուն մէջ տիրապետութեան հոգին կը փայլի, երկու ձեռքերը Լուսաւորչաց ուսերուն վրայ գրած յենած է . իսկ Լուսաւորիչ խեղճ կերպարանորվ իր երկուայրի թագին տակ կորագլւեմ կրտցեալ, ձեռքերը խաչածեւ կուրծքին վրայ բռնած՝ իրը աննախնակի ծառաց իր մեծաշօր տիրով առջեւ կը կենայ : Այս պիսի պատկերաց ազդեցութիւնը մէծ է ազգէւ ժողովրդական վրայ, և զայտ զիանազով է որ Հառմայ Պատկերը միշտ պատկերհաններու և տրձանագործներու խնամք տարած և պաշտպան կրցած են : Հառանական է որ պատկերի պատկերի մը հանգիսկելով պատրիարքն եկեղեցւոյ մէջ երբեմն բուն Հայաստանի Հայ մը զայթակղութեամբ այս հաշարաւ բացառաշնութիւնն ըսած է . Պատ ալ մի Քրիստոնկացար, Լուսաւորչաց պատկերը :

ցաք . դուք՝ կրկին յանցաւորք՝ օտարին համար զննեցաք ձեր հայրենի եւ կեղեցին կործանելու , և այսօր ժողովուրդը՝ որ անկից հեռացուցիք , ինչպէս նաև ձեզմէ , ձերյանցանաց համար , ձեր անիբաւութեանց համար , ձանցին զձեղ , սկսան իմանալ ճշմարտութիւնը , սկսան անպատճակ տեսնել թէ դուք Քրիստոփի չէք , և ոչ եւ կեղեցին , որուն վարձկաներն էք , որուն շաղօրսթիւներն էք , վասն զի ա՛լ այդ եկեղեցին վարդապետներ շունի . Ի՞նչոքէս հաւատանք այդ ձեր եպիս կոպաց , որ անսխալականութեան վարդապետութեան դէմ հատորներ գրելէն վերջը , ձառեր և ձամարտակութիւններ ընելէն և բողոքելէն վերջը , գլուխնին ծուելով՝ անձայն և լրիկ դողի պէս ստորագրեցին այնպիսի բանի մը , որուն դուք հաւատոյ վարդապիտութիւննեայն կը սակած կարդացող քրիստոնեայն գայթակղութիւն և կը ռապաշտութիւն կըսէ : Ի՞նչ պիտի զրուցէր Գրիգոր Պապը՝ Մեծը՝ Առաջնորդ՝ Սուրբը , (ոչ Եօմներորդը՝ փառասէրը՝ յամառը՝ արիւնարբուն , որուն ճշմարտապէս յաջորդներն էք ,) թէ որ տեսներ թէ դուք չէք շատանար “ ամբարտաւանութեամբ , հըպարտութեամբ , սիսալանօք , կեզծաւորութեամբ . ( յափշտակութեամբ Որդւոյն Աստուծոյ միայն պատկանեալ տիտղոսաւոր ) ” , այլ նաև կը համարձակիք՝ կը ժայռհէք անփառալին ալ ինք զինքնիդ անուաննել պղծութիւն “ պըշծութեանց ” վրայ բարդելով .

Բայց Բ՞նէ է հայրենի եկեղեցիէն օտարացեալ Հայուն վիճակը : — Թէ որ Հայ կաթոլիկութիւնը երկու ճշրուած կը կուտի , կը հայհցէ , կը նղովէ , աւտելութիւն կը չնչէ , Հասուն անունին

վրայ երկու սպանդ յաջ ու ձախ կը թաւալին , տուն՝ բնակարան՝ շոգենաւ՝ սրճարան՝ փաղսց՝ եկեղեցի՝ օրագրաց էջեր՝ Բարձրագոյն Դուռ՝ գետպանատուն և մինչեւ Արքունիք , աս անունը կը լիչէն և կը սովորին , կարելի՞ է ըսեւ թէ՝ այս Եպիսկոպոսը՝ այն վարդապետը՝ նա միաբանութիւնը՝ սա ամիրան կամ անդիի մեծատունը կամ խոտնազանքը եղան պատճառու և խըռովեցին ժողովուրդ մը՝ որ գառնուկի պէս հըւ էր , աղաւնիփի պէս միամիտ էր , կնկան պէս հաւատացեալ էր , վերջապէս ժողովրդեան պէս . . . ժողովուրդ էր : — Զէ , ոչ երբէք : Հասունը սկզբունքը մ'էր : Հռոմէկական սկզբունքն էր անձնաւորեալ կամ մարմնացեալ , Անոր համար ալ նոյն սկզբունքը օրինաւոր նախագահ զինք կ'անուանէր , վասն զի գաղտնի և անշըշունչ ելած էր աթոռին վրայ իրբեւ թէ սովորկած , և ժողովրդեան անհռուտութեան համար կը տեղաւորէր . թէ որ հանդարտ կենար և կամաց շարժէր , ով ձայն պիտի հանէր . բայց այդ ըսկըզբունքը դադար չը գիտէր , ուստի պէտք էր շարժէր և ամեն բան կործանէր . պէտք էր որ իր թոյնը թափէր ծածուկ կամ յայտնի Վենեակց Մխիթարեանց , Համազգեաց ընկերութեան , Անստոնեանց միաբանութեան , Բարեգործական ընկերութեան , և մանաւանդ Հայաստաննեայց հայրենի եկեղեցւոցն , և ուսմունքի և գիտութեան և աղքութեան սկզբանց դէմ : Այդ մարդը ստեղծուած էր ճիշդ իր պաշտօնին համար , և ամեն կատարելութիւն ունէր ’ի բնութենէ նոյնը անմերի կատարելու համար . առածիկ խղճմանիք մը դիւրացուցեր էր իրեն աղքատին ժառանգութիւնը յափշտակել , հարուատին ժառանգակից

Եւ շոշքորդ լլալ, միամսին առջեւ տուրք ձեւանալ, աղաստամիտ մար. գուն հետ փիլիսոփայ լլալ, բանապահութիւն իրբեւ սուր և սլաք դործածիլ, Տօն Կատապարոյէն մինչեւ Մէճմուայի, Աւտայէն մինչեւ . . . ի գրիչները քէն եւ թոյն լիցնելով ոսկեց գնով ծախու առնելով, մեծատոհմ եւ կարող մարդուն քաղցր ակնարկել, աղքատին, տկարին և առաքինութեան ոտնհար ըլլալ, Արծաթսիրութիւն յառաջադէմ, այնչափ միամիտ չէր որ երեսուն ողորմելի արծաթներու համար իր տէրը ծախէր, այլ շատ սրամիտ, իր Պիոսի առունով միլիոններ վաստիեցաւ.

Իր մուրացկանները հին և նոր աշխարհք<sup>(1)</sup> տակն ու վրայ կընեին, և իր ստորագրութիւնը և կնիքը արեւելքի աղքատ՝ հալածեալ և մորտիրսա կաթովիկութեան համար՝ Հավանայի խեղճ սեւամորթ գերւոյն արիւնէն և քրատինքէն լուման կը շրթէր, Այդ մորդը՝ որ իր ժողովուրդը կարհամարհէր, որ իր տէրութիւնը կը պարսաւէր, որ օտարին կը քծնէր, որ

(1) Կր մուրացկաններէն մին՝ Ներկուղարքապետ Ֆինմաններէն՝ 1850 ին միջներն իր հրամանալ և վիպայգրաւը Ամերիկայի կողմէրը ւրթալվ, ՚ի գարմին քուապս կղզայն հարաբերութեան և ողութեան բերանավոր նկարագրութիւնը կընէր. և երբ յաւնին բաց մէկը, ինչ մուրաց յարմար երկիր է եղիր այդ, վարդապետ, ըստա, պապան, մեցաւ և հարածական եղաւ, Խորը Հասունին ալ իր ազահութեան խաղող խաղաց, ժողովածո հազիւ համբու ծափքին բաւական եղաւ ըսկըլ. Բայց Հասուն ովկրտաբ միշտ սրամիտ՝ սպասեց յանոցուս զայթակըլութեան առիթ չի տուաւ. Երբ վարդապետը վախաննեցաւ Լոնդրա, և որովհետեւ շատ սպասարկեա մարդ էր և ինայութեանը կ'առգել. միք առաջին քայլն ըստա, ամեն գիզածը՝ մուրացկանութեան իրաւունք, յափշտակութեան իրաւունք, ինայութեան իրաւունք, առիւծի բաժինն ըստա, բան ժառանգաց հաղիքանի մը փշանք նետելով:

յաջողութեան կը չնմէր, վերջապէս որ մի մոոցաւ իր գերը, յաջուղութիւնը շացուց իր աչքերը, ինք որ կենդանեաց խորապէան էր, որ կը սովար և անշատ կ կը քալէր, ինք որ կամաց և անձայն կը հծէր և թեթե կը սուլէր, ինք որ մահաբեր հարուածըն տնդգալի կը թափէր և քուն կը անկարծ մոռցաւ իր բնութիւնը, առիւծ ուզեց դառնալ, զիմաղբութեանց իր ճակատը տուաւ և համարձակ երեւցաւ ամենուն յայտնի ինչ որ էր, և իմացուց ինչ որ կ'ուղէր :

Ահա մարդը որ իր աշակերտները զինքը մեծ մարդ ըստն, Արիասիդէս անուանեցին, Քրիստոսի նմանցուցին. Ինչ զարմանք, իր աշակերտները գիտեն թէ ինչ պատուական ժողովուրդ մ'ունին, որ ոչ մեծութեան, ոչ արդարութեան և ոչ պրութեան գաղափար ունի. գերագոյն ժողովուրդը որ իր հակառակորդը նախաւելու համար (հուգուգձու) իրաւունց կանուանէ. սպանելի ժողովուրդ՝ որ դիմացնին բերնէն Աւետարան բառը լսած ժամանակը՝ «Մեզի գրուցած էին որ այդ աւետարանը բոօթէսթանը կը կարգայ ո կըսէ. վերջապէս ժողովուրդ մը՝ որ իր լեզուն իր ազգութիւնը չը գիտնալը և զայն արհամարհէլը իրեն պարծանք կը համարի, եւ որ կրօնքը գիտնալ եւ ձաննալը իր քահանայից յանձնելունորս կրօնամոլութիւնը մի այն իր անձին կը սեպհականէ. Դուք որ տեսաք այդ ժողովուրդը, կըսեցէք մարդը որ առաջնորդ և դրօշակ է նորա. մենք իրեն վրայ այսչափ եւ շատ զրուցեցինք:

Ի՞նչ կուզէր, ուր կը զիմէր այդ մարդը, Հոսմէտական բացարձակ իշ-

խանութեան երեափախաննն էր . Հռոմ  
կերթար , և ժողովսւրդը ունեցածովին  
ու չունեցածովը , նիւթականովին ու  
բարսյականովը Հռոմ կը տանէր . եւ  
երբ գիմարդութիւն գտաւ , ք յա-  
շողեց , և իշխանութիւնը կորանցուց ,  
ինք որ “ Ես աս ժողովուրդը իմ ակ-  
րայիս զարկած եմ , աղէկ կը ճանէմ  
կըսէր , ինչ որ կրցաւ ըրաւ , ինչ որ  
Հռոմ զէնք մնացեր էր գործածեց .  
բայց Հռոմայ հատու զենքերը ոչ կոն-  
դակներն են , ոչ կախակայութիւնն է ,  
ոչ բանադրանքն է , ոչ նորա հերձուա-  
ծող բառն է (1) , այլ պետութեանց եր-  
կաթէ և կրակէ զէնքերն են , առանց  
որոց օգնութեան ոչ երբէք յաջողած  
են Լաամին եկեղեցւոց գլուխներն ի-  
րենց իշխանութիւնը տարածանել և  
ամրապնդել (2) .

၁၆၈

(1) Խնդ որ զրութիւն կ'ելլէ հրմա Հռոմեացաւ-  
ւան զրիշներէ, Գամբընեանէն մինչւ Պիոս Բի,  
ամենքը՝ Հայաստանեաց եկեղեցին Հին-Հերձուա-  
ծող և զՀայահամունեան Նոր-Հերձուածող կ'ա-  
նուանէն : Պապին վերջին կոնդամիլը (Յ Յօնանվար  
1873) Քիւրելեան Յովհաննես Պատրիարքին վրայ  
խոսելով կըս : « Խշուանութեան հասնելէն ետեւ,  
և հայածէս ուղղափառները կ'ես մը խոստամիրը և  
կ'ես մը սպասնապէք պահանջնեց և ջանաց իւր իշ-  
անանութեան տակ ճգկէլ Ար Եթէ յաջողըր, ուղ-  
դափառք նորին նոյն շատ խեզգչ միջակը կը դառ-  
ս Կային որուն մէջ տակէ քառասուներկուու տարիի  
յառաջ կը հեծէին՝ իրենց համածէս հին-Հեր-  
ժուածողց իշխանութեան տակ նուանուած ժա-  
մանակին : Նշյն կոնդամիլ կը դատապարտէ  
զանոնք, որ Պետրոսի վրաց հաստատուած կաթո-  
ղիկէ Եկեղեցին կը հեռանան : Այս հիմէն զԵ-  
կեղեցին բաժանողները, ալ Աստուածային եւ  
կաթողիկէ Եկեղեցին չեն պահեր, հասոս կը ջա-  
նան մարդկային Եկեղեցի մը չինել, որ ազգայ-  
նութիւն ըստուած մարդկային կասպերով միայն կա-  
պուած ըլլալուն : Աշ Երանելու յն Պետրոսի աթո-  
ւայն սերտիւ յարած քահանայից լոգիւը կը միա-  
ւարի, ու անոր պնդութեամբը կը զօրանայ...» :

(2) Ուղանան իր վլրանի Ուրմիւ ող Տէօ Մօնտի մէջ գրած "Այսօնական խոնդիքը ը ըստած յօդուածոցն մէջ պատճենական Տշմարութիւնամբ կ'ապացուցանէ մեր ըստածները :

ՓԱՌՔ Ի ԲԱՐՁՈՒՆ ԱՅՏՈՒՅՑ ԵԿ ՅԵՐԿԻՐ  
ՀԱՂԱԴՈՒԹԻՒՆ Ի ՄԱՐԴԻԿ ՀԱՅՈՒԹԻՒՆ

Ո՞վ կարող է համարձակ առել,  
Փա՞ստ ՚ի բայցունս Ասպուծոյ . արգեց  
Քարձելցն ոզդրմութեան վերաց ան-  
զգայութեամբ Նիրհաղ ընտրեալ ժո-  
ղավարելը , թէ Նորա շնորհաց ծագ-  
ման ժամանակ արթուն հսկող պար-  
զամիտ հալիւները : Ո՞վ կը համարձա-  
կի այս սրտեւամոքն շնորհակալեաց վր-  
ամեմ խօսքերը խղճի պրութեամբ ուզ-  
զել ՚ի բարձունս առ ամենակալն Առ-  
տուած :

— Բարե՛, ապերախտը չէ կարող  
արտասանել, քանզի զբթունքներէն  
վար ուղի տակ կը թափին. ապա շնոր-  
հը գուշած ժամանակ Տէրը կ'արհամար-  
հէ. ամբարտաւանը երգած ատեն կը  
հայդոյէ, ատեցողը այս խօսքով զԱռ  
տուած ի վրէմինդրութիւն կը չարժէ.  
ստուխօսը այս շնորհաց աւետեօք գոռ-  
վաբանելու տեղ կը թշնամանէ խաղա-  
ղութեան Հայրը և տիեզերաց Թագա-  
ւորը. վերջապէս ով որ սրտին մէջ  
որչացած անարդ կիզք մի ունի, չէ կա-  
րող արժանապէս ասել. Փառք ՚է բար-  
յունա Ապոռածոյ, և ոչ վստահութեամբ  
կարող է երգել. ՑԵՐՔԻ իշլըլը-ին- ՚է  
Տարբանի հաճութեամբ:

Վկ դմւք, որ սրտերնիդ խռ ովեալ  
է չարակնութեամբ, նախանձով եւ  
այլոց իրաւանց յափշտակիչ անցագ  
ցանկութեամբ. որ մաքերնիդ վրդո-  
վեալ է եղբայրատեաց վատ խոր-  
հուրդներով, մի համարձակիք այս  
խաղաղութեան աւետիսը հնչեցնելու:  
Դուք, որ խռովութեան մէջ որս կը  
որոնէք. դուք որ ատելութեամբ եւ  
զրկանօք շահ կը շրմէք, զգ ոչ կացէք  
զԱստուած խարելէ: Դուք, որ հասա-  
րակաց Արարքին արարածը, ձեզ նման  
մարդը, ձեր բնիկերը, ձեր եղբայրը

Կ'արհամարհէք, ձեր անդամակիցը կը  
մատնէք ու կը դաւէք եւ անդադար  
Աստուծոյ ժողովրեան մէջ խռովու-  
թիւն կը սերմաննէք . չէք պատկասիր  
իսլամ-իւն և հաճ-իւն ըսելու . մինչ  
դեռ ոչ խաղաղութիւն կայ և ոչ հա-  
ճութիւն . այլ իրովութիւն շատ, ա-  
տելութիւն յաճախ , որովայթ բազ-  
մամիւ և տհաճութիւն անբան: Դուք  
որ զԱստուած ՀԱՅԹ կ'անուանէք ի՞նչ  
պէս մի և նոյն խաղաղութեան Հօր,  
խաղաղաբար որդիք զիրար կը խոշուն-  
գէք և խաղաղութիւն ու հաճութիւն  
է կ'աղաղակիք: Դուք, որ նիրհած էք  
բարութեան և արթուն էք չարութե: .  
Ի՞նչպէս կ'ուղղէք առ բնութեամբ  
բարին այն գոհութիւնը և փառատ-  
րութիւնը, զոր չէք հասկանար և ըստ  
արժանուոյն չէք յարդէք :

25. Դուք չէք կարող այդ սրտով  
և այդ գործքով ճշմարտապէս գոհա-  
նալ, չէք կարող ձեր այդ խաբեռու-  
թիւնը մարսել: Եղբայրատեացին վը-  
րէ միսնդիրն Աստուած է, որ սրտերու-  
ծալքերը կը համրէ եւ նոցա ամենէն  
խոր անկիւններն աղ կը տեսնէ և “Տէ-  
րը հատուցանող է”:

— Ո՛վ զուարթուն ոգիք, դուք որ  
յերինից յերկիր բերիք այս խաղաղու-  
թեան աւետիսը, ինչո՞ւ շը տուիք զայն  
հարուստներուն :

— Վասն զի նոքա իրենց սիրոտն ու  
միտքը կապած էին իրենց ճոխութեան  
վերայ՝ քան թէ Աստուծոյ . իրենց յոյ-  
որ ջրած էին մամոնայի վերայ՝ քան  
թէ ամենազօրին: Կեանք, զօրութիւն,  
փրկութէն և յաջողութիւն կորստա-  
կան նիւթերէ եւ մահկանացու մար-  
դիկներէ կ'ակնկալէ՞՞ն՝ քան թէ յամե-  
նահարող անմահ Արարչէ՞՞ն: Ուստի և  
նոքա ունայն արձակուեցան :

— Ինչո՞ւ շը յայտնեցիք իշխաննե-  
րուն և բարձրագահ բազմող ժողո-

վրդեան մեծերուն :

— Քանզի նոքա իրենց յաջողու-  
թեան վերայ վստահացած՝ մեծամը-  
տութեամբ կը խրսխային և ամբար-  
տաւանութեամբ անձերնին ամեն բա-  
նի կարող կը համարէին . իրենց հը-  
պարտ սրտից յօժարութիւններն ու-  
գուսող մտաց խորհուրդները միայն  
գործադրել կը փութային: Արդարու-  
թիւն, ճշմարտութիւն եւ իրաւունք  
իրենց կամքն ու բազանքներն էր . ամեն  
սրբազն պարտք և նուիրական իրա-  
ւունք ոտնակիս կ'առնէին: Աղքատը,  
թշուառը, անջորը, որբը և այրին կը  
դրէին եւ իւրաքանչիւրը հակառակ  
Աստուծոյ՝ մէն մի աստուածներ կը  
հանդիսանային . ուստի և իրենց սրտ  
ու մտաց խորհուրդներովը ցիր ու ցան  
եղան , փրկութեան աւետեաց եւ  
ճշմարիա գոհաբանութեան անարժան  
դանուեցան . հգրք թուլացան և վէսք  
իրենց աթոռներէին անկան:

— Հապա ինչո՞ւ երկրի վերայ աս-  
տուածային խորհրդաց թարգման ա-  
նուաննեալ քահանայապետաց, քահա-  
նայից, գլորաց, օրինականաց, և մա-  
նաւանդ առաքինի և սրբասէր համար-  
ուած Փարիսեցւոց չ'աւետեցիք :

— Վասն զի նոքա եւս առանց ա-  
մենասուրբ Հոգեւոյն շնորհաց ապաւի-  
նելու, մարդկային սկար հանձարին  
վստահացած դրով կը սպանանէին մո-  
զովսւրդը , իսկ հոգին կ'ուրանային .  
իրենց շահուն համար անխիզճ մտօք  
Աստուծոյ օրինաց ճշմարտութիւնը  
կը թիւրէին և նորա սրբութիւնն ու  
յաւիտենականութիւնը ժողովրդեան  
մտաց մէջն կ'եղջէին . մարդկային  
կամ անձնական նկատումներով մար-  
դոց ուսումն ու վարդապետութիւնը  
ասաւածայինէն նախագաս և ստի-  
պոլական կը համարէին . կեղծաւորու-  
թեամբ արտաքուստ առաբինի կը ձեռ-

ւանային, մինչդեռ ՚ի ներքուստ ապա-  
կանութեամբ լցուած, խաւարած ու  
մօղբած, Աստուծոյ խաղաղ թագա-  
ւորութեան հասնելուն անտեղեակ,  
միանգամացն և հակուաակ էին, յար-  
բած և յիմարացած լինելով չուզեցին  
զԱստուած փառաւորել ուրկէ կա-  
խումն ունեին միշտ, Աստուած ալ  
զիրենք արհամարհեց և սովորեցնելու  
համար որ չնորհքն ու զըրութիւնը ի-  
րենցը չէ, այլ Աստուծոյն է, նոյա-  
պաշտօնը եւ իրաւունքը տուաւ ա-  
նարդ համարուած յիմար ու անջօր  
մարդկան, որոց ներքին արժանիքը կը  
գերազանցէր նոյա բոլոր կարծեցեալ  
արժանիքէն եւ արդարութիւնը կ'ա-  
ռաւելցը նոյա համայն արդարութե-  
նէն :

— Ո՛վ անմահ զուարթունք, ոգիք  
երկնայինք, Հրեշտակէ սիրոյ և աւե-  
տարանիքը խաղաղութեան, ըսէք կ'ա-  
ղաքէմ, երբ դուք անթիւ բաղմու-  
թեամբ Բեթղեհէմի դաշտին վերայ  
սիրեցայք և անպատճում ուրախու-  
թեամբ մարդկան ազգի մեծ ուրա-  
խութիւնն ու միմիթարութիւնը աւե-  
տեցիք, երբ այն պարզամիտ ու խա-  
ղաղասիրտ հովիւննը քաջալերեցիք.  
երբ Բեթղեհէմի այրին մէջ ծագած  
Լոյսը, աստուածային յաւիտենական  
Մանուկը անոնց մատնանիշը ըրիք, այն  
առեն ալ նոյն երկնաւոր հիւրին առ  
սլքնջական եղող անշուք այրը այժմեան  
պէս էր, այն անմեղ և անմահ մանկան  
սրաշտօն հարկանող հովուաց սիրտն ու  
միոքն ու այժմեան պաշտօնէից զգաց-  
մանց և խորհրդոց պէս էր,

— Ո՛չ, յայնժամ այն տեղ արուես-  
տական յղիեալ բարեր, պորփիւր կամ  
կուձ չը կար, բայց հանդարտութիւնն  
ու երկնային խաղաղութիւնը անմա-  
հին բնակարանին հաճոյական զարգե-  
րը կազմէին: Այն ատեն անդանօր

ոսկի, արծալթ և ականակուռ անօթ-  
ներ ու զարդեր չը կար, ոյլ հաւատք  
և անմեղութիւն, սրբութիւն և հնա-  
զանկութիւն, սէր և յօյս օսպաս կը  
տանէին յաւիտենական տրքայ Մա-  
նուկին: Այն ժամանակի խոնարհ Եր-  
կրպագուաց մոտաց մէջ խորամանկու-  
թիւն, նենգութիւն և տիրապետական  
ամբարտաւանութիւն չը կար, նոյա  
սրտից մէջ փառասիրութեան աենջ,  
ագահութեան բաղձանք և ատելու-  
թեան զգացումն մուտ գտած չէր.  
այլ հեղութեամբ, չնորհակալութեամբ  
և քաղըր երախտագիտութեամբ լցո-  
ուած կը խոնարհէին այն անձառ լու-  
սոյն առջեւ, որ կը լուսաւորէր թէ  
գիշերթան մթութիւնը և թէ երկրո-  
պագուաց սրտերը: Այն ատեն՝ փո-  
խանակ այժմեան կանգեղաց, ջահից  
և ճրագաց, որբ գժբաղդաբար հա-  
կառակութեան և խովութեան պատ-  
ճառ եղած են քան թէ պատուց և  
պաշտաման նշան, այն տեղ կը փայլէին  
ճշմարիտ հաւատքն ու չերմեռանդն  
պաշտօնը:

Սորա համար նոքա արժանացան  
երկնային խաղաղութիւն վայելով ան-  
մահ հրեշտակացս երգը լսելու և հա-  
մարձակութեամբ մեղի հետ երգելու.  
« Փամոք ՚ի բարձունս Աստուծոյ եւ  
յերկիր խաղաղութիւն ՚ի մարդիկ հա-  
ճութիւն ո: Մեք յերկնից յերկիր բե-  
րինք այս գոհաբանութեան երգը և  
բարութեան ու խաղաղութեան աւե-  
տիսը. մէք ուսուցինք մարդկան այս  
հրեշտակաց ուսումնը, բայց խիստ սա-  
կաւք ՚ի մարդկանէ կարողացան ար-  
ժանապէս երգել դայն. խկ բաղումք  
խաղու և միմիսյն սովորութեան փո-  
խեցին: »

— Ի՞նչ կուվես, ովհ հարցասէր, Բեթ-  
ղի հեմի այրին հին արժանիքը նորոյն  
հետ համեմատել կը կամիս. ոհ, տար-

բերութիւնը խօսու մեծ է, այն ա-  
տեն երկինք էր, Աստուծոյ տուն եւ  
տաճար էր. այն ատեն փոխանակ ա-  
տելութեամբ եւ խռովութեամբ ծը-  
խուած խնկոց, կենդանի հաւատք,  
անկեղծ սէր եւ հաստատուն յցո կը  
բուրէր, այն ատեն փոխանակ ձանձ-  
բացեալ շուրթերէ թափուած անսիրտ  
ազօթքներու և փոխանակ աստուա-  
ծատեաց կիրքերով զգածեալ կատար-  
ուած պաշտօններու, զմայլեալ սրտե-  
րէ եռանդուն և յօժարակամ երգ ու  
օրհնութիւն կը սլանար. կը կամիս որ  
վերջին խօսքն ըսեմ, այն ատեն տուն  
էր Աստուծոյ իսկ այժմ այրէ աւաղա-  
կաց, ուր կ'որջանան արք արեանց,  
որոց հատուցումն անվրիպելի է . . .  
Տուն է աւաղակաց, վասն զի ա-  
նօթք կը յափշտակին, պատկերք կը  
խորտակին, կանդեղք կը չարդին, ճը-  
րագարանք և աշտանակք կը բեկանին  
և սուսերօք և բրօք նախճիք ասպա-  
տակութեան կը գործին — :

Արդարեւ ովք քրիստոնեայք, ովք  
դուք, որ զԱստուած՝ զգատճառն բա-  
րութեան եւ խաղաղութեան ՀԱՅԻ  
կ'անուանէք, դուք ինչ ազգէ կ'ուզէք  
եղիք, հերիք է որ ձեր պաշտաման ըս-  
կըզունքը մէկ է, դուք ամենքդ ալ  
անդամ էք մէկ գլխայն, մէկ Տէր Յի-  
սուս Քրիստոսին, որ խաղաղութեան  
համար եկաւ, հաշտութիւնը ըրաւ,  
զմարդիկ իրարմէ եւ զԱստուած՝ ի  
մարդկանէ անջատող միջնորմն քակեց  
և միացոց զմարդիկ ընդ մարդկան եւ  
ընդ Աստուծոյ: Այս յաղթող հաշ-  
տարարը հեղութեան ու խօնարհու-  
թեան ձանքով եկաւ, այս խաղաղու-  
թարը սիրոց և բարերարութեան միջո-  
ցաւ վարուեցաւ մարդկան հետ. իւր  
երկնային պաշտօնը անդատին ծնած օ-  
րէն սկսաւ: Այս այրը, ուր դուք  
զԱստուած պաշտելու համար վերաբ կը

խոշտանգէք, բարձրածայն կը քարոզէ  
ձեզ խռնարհութիւն և սէր. այս ազ-  
քատիկ այրը կուսուցանէ ձեզ որ Յի  
սուս Քրիստոս ձեր ձմբաւթենէ աւել-  
լի ձեր սիրալը կ'ուզէք, այս այրը կը  
յանդիմանէ զձեզ ձեր կեղծաւորու-  
թեան և ստապաաիր պաշտամանց հա-  
մար, Աստուած խռովութեան մէջ չք  
պաշտուիր . . . .

Ո՛հ, որչափ ներհակ է ձեր գործը  
Փրկչն կամաց: Ձեր ատելութեաննը-  
շանն այն տեղ կեցած ատեն ինչ սրբ-  
տով ծունկի կը չօքիք և երկրպագու-  
թիւն կընէք. այն տեղ, ուրիէ աշխար-  
հի համար խաղաղութիւն, հաշտու-  
թիւն և փրկութիւն սփռեցաւ: Երբ  
կը տեսնէք այն տեղ օտարազգի և այ-  
լակրօն զինուոր մի, զըր ձեր ատե-  
լութիւնը կանգնած է իբր արձան  
յաւիտենական նախատանաց: զի-  
նուոր մի որ ձեր պաշտամանց խոր-  
հուրդը չք հասկանալով եւ ձեր խը-  
ռովայսց վարքէն զգուելով կ'արհա-  
մարհէ և կը ծաղըէ զայն: հրացանա-  
կիր մի կը տեսնէք այն աեղ, որ զքը-  
րիստոնեայ զեղաքարսդ խաղաղելու հա-  
մար արձանացած է բռնութեաննշա-  
նով, մահատու զէնքով: Եւ երբեմն  
անհոգութեամբ ոտքին տրոփիւնովը  
երբեմն ալ ձեռքի զինուց շիրտոցովը  
բարեպաշտ ազօթաւորին հանդարտու-  
թիւնը կը խսովէ, երբ կը տեսնէք,  
կըսեմ, որ աստուած պաշտութիւնն այ-  
լըն կատականաց եղած է և Աստու-  
ծոյ անհունը կը հայհոյուի ձեզ համար ո,  
ինչպէս կը պարձիք տակաւին իրը ճըւ-  
մորիտ աստուածապաշտ և սցըց առ-  
ջեւ արքայութեան գոները փակելու  
և դժոխոց դունելը բանալու յանդու-  
գըն սպառնալերը կընէք: Ո՛հ, ինչ-  
պէս չէք ամաչըր դուք երբ հաշտո-  
րար սրբազն Խորհրդոց ժամանակ  
անդամ ձեր ատելու թեան վկայ կանդ-

նոզ այս անհրատշամ պահնորդը այն  
անզ կը աեւուեք, եւ այն ալ աս րը  
խորհրդացն այնքան մաս, որ կը կար-  
ծես թէ քշցակալ պաշտօնեաց մի է,  
քանզի տեղը ասանել օտարի մի համար  
խօս նեղ է, որով ձեր պաշտամ Առ-  
տուծոյն անունը կ'առհամարհուի ձեր  
կրից համար, ձեր, ու միայն ձեր  
պատճառուու:

Դուք որ կը պարծիք խաղաղու-  
թեան Առտուծոյ պաշտօնեի անուտմբ,  
քաղաքական սատրին պաշտօնեից մի  
չամութեան կը կարօտիք խաղաղե-  
լու համար: ԿՇնուատուին ծննդեան  
վայրը մահասախթ զէնքն ի՞նչ բան ու-  
նի: Դուք, որ ձեր կեանքով ու վար-  
քով կենդանի քարող պիտի լինեիք ա-  
մեն այլակրօնից, որ գառնան և Սրբոց  
Երրորդութեանն երկրոգագու լինին,  
դուք այժմ քար գայթակղութեան եք  
նոյն խակ այլակրօնից:

Այդպէս ուրեմն, սիրելու անզ  
կը թշնամունեք, պատուելու և յար-  
գելու պատրուակու կանոյսուուեք,  
պաշտելու դիմակու կը վստովիք և ՚ի  
զարոյթ կը շարժէք հեղին ու քաշցրա-  
գութ Տէրը:

Ո՞ր անհաւատը, ո՞ր անկրօնը, ո՞ր  
հերցուածողն ու հերեսիովովը ձեզ  
չափ կրօնից սրբութիւնը ազարտեց  
... Նորա գէթ բացորձակ յայտնի  
հակառակորդք լինելով կարելի է Ճա-  
նաչել վնասա և կրօնիք թշնամի նկա-  
տելով զդուշնալ անոնցմէ. խակ դուք,  
բարէ, պատրուակեալ աստուածա-  
պաշտը, կեղծաւոր հաւատացեալք,  
թիւրիչ և եղծիչ ուղղագառք, խառ-  
նակիչ եւ խումլացոյք քրիստոնեացք,  
հետեւաբար եւ անարդուք պաշտա-  
մանց, բարեկամաձեւ թշնամիք կրօ-  
նից և առաւել վանդակուոր գայթակէ  
վեցուցիչ ոստիք քան զանհաւատու: Ե-  
թէ զնեղ ՚ի գարձ և յուղլութիւն հը-

րաս իրաղ աստուածայինն երկայնաւու-  
թիւնն ու ներոգամանութիւնը կ'ար-  
համուրհէք, վախցիք, սատրացէք նորա  
համերերաթիւնէն, նա բարեաց հա-  
մար միայն գթած է, խկ չարաց հա-  
մար՝ արգար . . . :

Միթէ դուք, ով յիմարք և ոչ ի-  
մասաւունք, կը կարծէք թէ աստուա-  
ծատաղաջու էք, ոչ, փարբիկ մասցրոգ մի  
կայ, որ հոգւով, հեղութեամբ, հը-  
նողանեգութեամբ և անկեղծութեամբ  
զԱստուած կը պաշոէ, նա է Աստու-  
ծոյ պաշտօնեայն, նա է Ճշմարիտքը-  
բրիստանեայն: Խոցիս վիայ, տեսէք  
աստուածային պաշտամանց ամենէն  
նուիրական տեղին. տեսէք անդ զի-  
նուորաց ներկացութիւնը, լսեցէք նո-  
ցա բեւեռապատ գարշապարաց Ճը-  
սինչը, նկատեցէք նոցա անհամեստ  
խնծղանքը, ծիծաղն ու ծաղը . . .  
Ո՞հ, չէք տեսնեք այս գետնի գիրզաած  
փաշն ու կեղուը և նոցա վիերաց կանգ-  
նող զինակիր պահապանը որ հրաման  
ունի սրբիկելու զձեղ որ չը մարքէք:  
Այդ քիչ անսպազութիւնն կը համարիք  
ձեր անձին, ձեր պաշտաման, նոյն  
անզոյն սրբութեան և նորա տիրով.  
միթէ կարող էք խարեւլ թէ դուք այդ  
անզ զԱստուած կը պաշոէք. կարող  
էք համուկեւ թէ այդ հակառակու-  
թիւնները կրօնի նախանձաւորութիւն  
է: Ո՞չ, ոչ, խարուող չը կայ, այդ ա-  
մենուն շարժասիթը տեղ գողնալու  
ցանկութիւնն, նախապատուութիւնն  
անց և նկաթական շահու սուփանին  
է որ զձեղ այդ աստիճան կատաղու-  
թեան կը մասնէ, և դուք տակաւին  
երես ունիք զձեղ քրիստոնեաց անտա-  
նելու. աակաւին չէք պատրիտիք:  
“Փառք ՚ի բարձունս Աստուծոյ և  
յերկիր խաղաղութիւն երգելուա, մինչ  
զեռ խաղաղութիւն չը կայ. Բ՞նչ ուր-  
աով եւ ի՞նչ խօրհրդով, “Ի մարգիկ.

Հաճութիւն ո , կըսէք . քանի որ ան Հաշտ առելութիւնը դարերէ ՚ի վեր որչացած է ձեր պատին մէջ :

Յն ուրեմն , եթէ առկաւին չը պիտի զգացք ու զգացք , եթէ առկաւին պիտի յանառիք ձեր այդ գայ թակլեցուցիչ կորուսական ճանրուն վերաց , եթէ մինչ խաղաղ չը պիտի գանէք գորա ելքը եւ հաշտաբար ու իրաւախոն չը պիտի լինիք միմեանց հետ , լուցէք Յիսուս Քրիստոսի , որ իւր աստուածացին խօսքի խարսազանաւ ։ ը զձեզ հալուծելով կը գոչէ . “ Առէք այդ ամենը և դացէք այս տեղէն , և Հօրս տունը առ ու տուրի տուն մի գարձնէք ո . Վերջի համաշխարհական դատաստանի ահաւոր առենին մէջ ազ պիտի պատասխանէ . “ Զձեղ չեմ ճանացներ , մէկ դի կեցիք գուք անիրաւութեան բոլոր մշակներ ո :

## Ա Ր Ո Ղ Զ Ա Կ Ա Ն

( Եպունակութիւն . առ թիւ 6 : )

Խմաստակէր մը ըսաւ թէ , “ Մահ ուսն վերայ մասնելը խմաստափութիւն է ո . և յիրաւի , մահուան վերայ մասնելով մարդ կը զգուշանայ մեղանշելէ և անձը առաքինութեան մէջ կըթելով անով կը զարդարուի . վարքը և բարքը կ'ուղղէ , կամքն ու կիբերքը կը զարէ , կը կամնանաւորէ և մարդկութեան կոտարելութեանը կը հասնի , այնպէս որ իւր կենաց հաշիւր պահանջաւած առեն պարզ երես կըներկացնայ իւր դատաւորին առ շնուր և գովութիւն կը ստանայ , և ա-

հայ այս է իմաստափութիւն :

Նշանաւոր իմաստանին առ ճշմարիտ խօսքը . “ Յիշէ քու վախճանող և յաւխանան չես մեղանշեր ո , խիստ իւրաւացի է . քանզի զիտէ խելամսութեամբ , որ իւր կեանքը , իւր անմասն հոգին եւ իւր բանականութեան ան գին տաղանդը իրեն յանձնող Արտրի չը օր մի իրմէ հաշիւ պիտի ուղէ , առնելու համար թէ այս տաղանդը շոհեցուցէր է թէ կորուսեր է , եւ ըստ այնմ վարձք կամ պատիժ պիտի հատուցանէ . Աւսոի մահուան յիշատակին հետ անբաժանելի կերպով կապակցած կ'ունենայ վերջին դատաւանին միշատակն ալ զրով խապու կը հրաժարի մարդ մեղաց ու մոլութեանց Ճանապարհէն :

Մեզքէ հրաժարելու վայթ շունեցողը և պղծութեան ու ապականեալ գործոց մէջ յորատեւաղը կը նշանակէ որ կուրանայ մահուան խօսւթիւնը , կուրանայ վերջին դատաւանի ստուգութիւնն ու ճշմարտութիւնը , եւ մինչեւ իսկ կուրանայ Աստուածութեան գոյութիւնը , որ բարերարութեամբ լեցուցած է զինքը և գթութեամբ յայտնած է վերջին ահաւոր դատաւանի խօսքուրզը խիստ բացացայա խօսքերով և բաղմանթիւ յայտնի օրինակներով , որոց խելամսուտ կը նելու համար կը հրաւիրեմ զձեզ հայրական սիրով որ գուք չերմեսանդութեամբ , աղօթքավ , հեղութեամբ ու հնազանդութեամբ սորբ Գիբք կարդաք , որ կարով է զձեզ լուսաւորել և համոզել , իսկ ես կ'անցնիմ երրորդ դարմանը քննելու և անոր օգուտաները նշանակեաւ :

Ժ.

Յ.՝ Անր գրացորանաց առարկաց եղող անխայել բաներն են որ շատ անդամ զմեղ մեղաց կը յօժարեցնեն . անհամեստ տեսարաններն ախորժանաք նկատել , անսպարիկեցո խօսքեր ընելու սպիտել , լիտի և կիրքեր գրգռող պոտմութիւններ լսել կամ կորդալ , այս ամենը կը յօժարեցնեն զձեղ զէպ ՚ի մեղք և ամեն տեսակ չարութիւն գործելու առիթ կուտան . վասն զի ձեր միսքը կը զեազեցնեն չոր խոր հուրդներով , ձեր կիրքերը կը բորբոքեն եւ կը մշեն զձեղ կուրօքէն անարժան գործերու . զսրո կոտարած ասեննիդ թէպէտ զուարծութիւն և հաճցք կը զբաք , բայց այդ զուարծութիւնը ձեր առագայ թշուառութեան սկիզբն է , ինչպէս որ տեղ մի ըսուած է , “ Այն օրը որ դուն հեշտութեան օր կը սեպես , նոյնը քեզ ցաւերու օր պիտի ըլլայ ո : ”

Գրացորանաց առարկաց եղող գարշելի տեսիլներուն որչափ վնասակար մնելը իմաստունը լու . կ'ուստուցանէ մեղ . “ Թարձնոր , կ'ըսէ , քու երեսդ հագուած շբուած կնիքէն , և օսար գեղեցիւթեան վերաց մի նայիր , ինչ չու որ կնոջ տեսքին համար շատերը կուսուեցան , և ասից է որ ցանկութիւնը կրակի պէս կացըէ : Յանկութեան ետեւէ մի երթար , և քու կամ քիզ յօժարութենէն ետ կեցիր , թէ որ կամացդ փափաքը կատարես , ըղքեզ կը որաց քու թշնամիներդ վրադ խնդացնելու համար . Յնաւ մէկու մը հետ քու անձդ պոռնիւթեան մի տար , որ չըլլայ թէ անձդ ալ ժառանձ գութիւնդ ալ կորանցնես : Օձէ փափշելու պէս մեղքէ փախիր , ինչու որ Եթէ անոր մօտենաս կը բանուիս : Վի նին ու կնիքները իմաստուններն ալ կը

մօլորեցնեն : Աղէկ է որ մարդ անդդամոց սպառնավերը լսէ , քան թէ ան միաներուն երգը ու Նմանապէս Առաքեալն ալ կ'ըսէ , “ Մի խաբուիք , չար խօփերը՝ քազըր բարքերն ալ կ'աւրենու :

Այս վճիռներէն պարզապէս կը հասկանամք որ մեր գրայարանքները երբ առանց սանենելու թող կուտանք որ անսպարիկեցո բաներով զբաղի , մեք զմեղ վասնպի մէջ կը ձգենք և մեղաց որոգայթէն կը բռնութիւք : Աւրեմն խելացի մարդուն որչափ կարեւոր է ըղգուշանալ երեւակացութիւնն ու կիրքերը չարութեամբ գրգռող տեսարաններէ և խօսքերէ . խահեմը և բարութեան փափաքառզ կը փախչի աննցմէ , կամ կը հեռացնէ զանոնք իրմէ , որպէս զի խորհուրդը չափականնեն . ինչու որ մեղքը նախ արտաքին պատճառէ մնաց մէջ գոյութիւն կ'աւնու , այն տեղ կը կազմակերպի եւ ապա գործով կը ծնանի . ուսափի խորհուրդը և մնածմաւնիքը զափելով բարի և օգտակար մոտածմանց վարժեցնելը՝ մէղքէ աղստ միալու ամենամեծ միջոցն է : Ինչպէս որ յառաջ ով ըսած եմ , թէ մեղքէ աղստ մնալու համար մեր Տէրը առաջին անդամ խորհուրդը զափել եւ սկրապ որբել օգտառ իրեց . և այս ալ ուրիշ կերպավ շըլլար , եթէ ոչ սկրան ու միաքը ապականող պատճառներէ զգուշանալ և հեռանալով եւ միանդամցին անոր հակառակ մնաց և որտի վեմ խորհուրդներ եւ ազնաւական դժացումներ թելադրող առարկաներով զբաղիլ և աննացմով կրթուիլ : Ասպ համար ըսած է Քրիստոս . “ Թէ որ աջձեռքդ կոմաքքար , կամ ոսքդ զբեղ գայթակղեցնէ , կարէ ու քեզմէ հետացուը , ինչու որ աւելի լաւ է ան գամներէ գ մէկը կորսուի . քան թէ բոլոր մարմնովդ գեհենին դատապար-

տուիս ։ Ոլով սովորեցոց մեղ մեր Փրկիչը որ միշտ մեր կենաց թշնամի համարինք այն ամեն բաները, որը ըդ մեղ կը մարդեցնեն և մեր գէշ ըլլա ըւն պատճառ կը դառնան, որոց կարդէն է վաս ընկերակցութիւնը, որ գրեթէ կարող է ամեն չարեաց պատճառ համարել։

4. — ՎԱՏ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹԻՒՆԸ կամ սուտ անուն բարեկամութիւնը գեղեցիկ ծաղկանց մէջ պահառող ժամանակութ օձերու նման անցոյաց կերպով մարդ կը թունաւորեն։

Յայտնի բան է, որ մարդ ընկերական ստեղծուած լինելով գրեթէ անհնար է առանց ընկերի ապրիլ բայց որը մեծ զգուշութեան ողէաք ունի ընկեր ընտրելու կամ բարեկամ ճանչ նալու գործը, Ընկեր մը կրնաց զմորդ կործանել կամ կանգնել. ընկերը կառող է մարդուս կետնքը կամ մահ դառնալ։

Դաւք ըստ մեծի մասին ձեր մոլութիւնները վաս ընկերներէ ստացած էք, անհանկ ընկերներէ, զորս ու աշխն անգամ ձեր հոգին ու կեանքը կը համարէիք, չափազանց սերտ մասերմւթեամբ վերար կը սիրէք և որբութեամբ միմեանց հետ կը վարուիք . կը համարէիք թէ միմեանց մունդ և կեանք կուտաք, Բայց չարդ շուտափ փարձեց զձեղ և ձգեց այնպիսի վասանդաւար որոգայթի մը մէջ ուրիէ ազատիքը խօսա դժուար կը լինի, և եթէ արթիստթեամբ շուտավ ք գդաստանայք և մէկէն ՚ի մէկ ք թօմափէք ձեր վաս հիւսուելու սկը սած շղթայն, գրեթէ փրկութիւնն անհնոր կը լինի։

Մատածեցէք անդամ մի, այդ չար սովորաթիւններէն որ մէկը ձեր վաս ընկերակցութեան դասն ու մահահոտ

պառւզը չե . այս չար յանկութեան թելազրած բոլոր անօրէն գործքերը ձեր անմտութեամբ ընտրած ընկեր ներսն հետ ուրախութեամբ խաղած ատեննիդ սովորած էք, որք վերջը ձեղ սասկափ արտամութեան պատճառ պիտի լինին, վասն զի և Զեր այս օրուան վայելած հեշտութիւնը գալիք թշուառ ութեանցդ արմատն է ո.

Խահեմ, փորձառու եւ բարեսէք սնձինք որշափ ցաւ ու վիշտ կը դժան երբ զձեղ ատանկ գէշ ընկերներու հետ վաս յարաբերութեան մէջ կը տեսնեն : Մանաւանդ առաւել կը տափնապի նոցա սիրտը երբ ինչ և իցէ առթիւ չեն համարձակիք այդ նիւթին վերաց ձեղ հետ խօսելու, ընդ ձեղ խրատելու եւ զգուշացնելու : Այս, ձշմարիտ է, սիրելի օրդեակիք իմ, պարիեշտ եւ խահեմ անձի մը որուէն արիւն կը հօսի, երբ զձեղ ընկերութեան կամ բարեկամութեան սորբ անունով, վաս յարաբերութեանց մէջ կը տեսնէ, վասն զի գիտէ որ դուք զիրար սիրտի մոլորեցնէք, իւրարու նոցելով սիրտի վասմարանաք և հոգւով ու մարմնով եղանակիք, գիտէ որ իրարու չար օրինակ դառնալով սիրտի չարանայք . վասն զի և Զարութեան օրինակիը աղջոց վրայ տեսնելու պէս ուրիշ բան չի կայ, որ կարողանաց մարդուն ամօնթը վերցնել և չոր գործելու համարձակեցնելու : Մարդ ինչ պէս ընկերական է նոցնպէս ալ ուրիշ ներուն նմանելու յատկութիւն ունի, յօժարութեամբ կը փութաց նմանիլ անոր, որոց հետ կը կենակցի, « Մարդ որոց հետ որ կը կենակցի անսնց բարքն ու բնութիւնը իւր վերաց կ'առնու . և ինչպէս որ մարմնոց տեսակ մի ախտերը փափաղբակն են ու միայն զըգչելով ուրիշն կ'անցնին, անանկ ալ հոգւոյ ախտերը իրենց մօտեցողին :

Գիտեմողը իւր ու բախտակիցներն ալ գիւնեմող կ'ընէ . անառնօմներու և իրակներու խումբը ամեննէն աւելի ժուժէ . կալ ու պարկեշտ մարդն ալ մեզիելով թուլոյնելով կը գէցնէ , և ագահութիւնն ալ իւր թոյնը իրեն մօտ եղած ներուն կ'աղդէ : Ազա ուրքմն որչափ աւելի հեշտախտամոները իրենց հետ խօսովները կարող են ասպականնել : Առանձնութեան մէջ կը խօսակցին . գաղտնութեան մէջ կը հրապուրեն , խաւարի մէջ կը սրբն և իրենց ապականեալ որտե՞ն եւ մոքքէն ժայթքած վալվաշոտութեան սպասիչ թոյնը իրենց ընկերին սրամն մէջ կը ծաւալին և այն թշուառն ալ հոգւալով ու մարմուլ իրենց պէս կը սրբնեն : Յայտնի է ուրեմն որ խիստ մեծ զգուշութիւն հարկաւոր է լաւաբարոյ ընկերներ գտնելու համար : Վուք որչափ որ սիրտի զգուշանայք լոււ ընկերներ ունենալու , որպէս զի չը մոլորիք և չը գայթակցիք , առաւել եւս որդոք է ըզդուշանաք ասատիկ երկիւղածութեամբ որ ուրիշներն ալ ձեզմէ չը գայթակղին և ձեզմով չը մոլորին : Ընկերին գայթակղութեան սրամճառ լինելը ամենամեծ մեղք է . քանիզի մինչեւ նորս մահուան պատճառ լինելէ , անոր համար էր որ Յիսուս Քրիստոս սաստիկ կը զգուշացնէր եւ գայթակղութիւն պատճառովը ծնանելու կամ գերեզմանի անգամ արժան չէր համարիր . “Աղէկ էր որ , կ'ըսէ , այնպիսին բնաւծնած չը լիներ . կամ , Երանի թէ պարանոցէն մեծ քար մի կախուելով կենդանւոյն ծովը նետուէր , քան թէ այս փոքրիկներէն մէկը գայթակղեցրնէր :

ԱՇ , որչափ աղետալի է ասանկ ընկերութեան վախճանք . որ մը պիտի գոյ , որ տեսնէ մարդ թէ ինչպէս իւր որդութիւնն ու անմեղութիւնը կու-

րուսուծ է . մորմբնը տկարութեան և ցաւաց մասնած և հոգւաց կարաղութիւններն եղծած ու բթացուցած է . և իւր այն անցեալ վայրիննական հեշտութեանց փախարէն իւր վերայ տեղակալած է անբուժելի ցաւեր եռաննապատ խղճի խայթ մի , որ հանուպաղիւր հոգին կը կեղքէ :

